



BURBANK
UNIFIED SCHOOL DISTRICT



Նորություններ դպրոցները
բացելու վերաբերյալ

10/21/20


ԴՊՐՈՑՆԵՐԸ ԲԱՅԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

- **Աշակերտի անվտանգություն**
 - Ֆիզիկական առողջություն
 - Սոցիալ հուզական առողջություն
- **Աշխտակազմի անվտանգություն**
 - Ֆիզիկական առողջություն
 - Սոցիալ հուզական առողջություն
- **Դասավանդման որակ**
 - Առավել խոցելի աշակերտների կարիքների բավարարում
 - Դասավանդման ճկուն մոդելի մշակում
 - Շարունակական աջակցություն հատկացնել

ԲՈԼՈՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՄՆՎԱԾ ԵՆ
ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԵՎ ԳԱՎԱՌԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ՎՐԱ



ԳՈՐԾՈՂ ԲԱԺԻՆ



ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- Երբ դպրոցները բացվեն հիբրիդ մոդելի եղանակով, տեխնոլոգիական աջակցություն հասկացնել դպրոցներին տեղադրելով սարքավորումներ, որոնք կաջակցեն ուսուցիչներին բավարարել իրենց փոփոխվող կարիքները
- Շարունակել տեխնիկական աջակցություն ցուցաբերել դպրոցում/առցանց աշխատակազմի, աշակերտների և ծնողների համար:
- Առօրյա մաքրման գործընթաց
- Առօրյա աջակցություն համացանցային կարիքները բավարարելու համար.
 - Տեխնոլոգիայի հետ կապված խնդիրները լուծելու համար, ծնողները, աշակերտները և աշխատակազմը պետք է առցանց պահանջ ներկայացնի հյուրընկալելով [BUSD Student / Parent Tech Support](#) կայքը կամ զանգահարելով օգնության գրասենյակին (818) 729-3401 հեռախոսահամարով:
 - Սարքավորումները կարելի է բերել երեքշաբթի/հինգշաբթի օրերին զանգահարելով 818/729-3403 հեռախոսահամարին և ժամադրություն վերցնելով (սահմանափակ քանակով) – տեխնոլոգիական օգնություն ցույց չի տրվի սարքավորումը բերելու օրը:
 - Սարքավորումը կփոխարինվի մեկ այլ սարքով, եթե հնարավոր է (Քրոմբուկներ/թեժկետեր) միայն ժամադրություն վերցնելով կամ դիմելով դպրոցին:
 - Եթե սարքավորումը չի փոխանակվել ուրիշ սարքով, ապա այն վերանորոգելուց հետո և պատրաստ լինելու դեպքում ձեզ ժամադրություն կտրվի այն ետ վերցնելու համար:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մաքրող և ախտահանող նյութերի, անձնական պաշտանության սարքերի և առողջապահական պարագաների կայուն պահեստ ունենալ:
- Հավաքարարները օրվա ընթացքում մաքրում և ախտահանում են սանհանգույցները, բուժկետերը (ներառնելով առողջների և հիվանդների սենյակները) և հաճախակի հպվող այլ մարերևույթներ:
- Հավաքարարները մաքրում և ախտահանում են հերթափոխների միջև.
 - Կարող է օգնություն խնդրել մյուս աշխատակիցներից
 - Մաքրել շատ հպման կետերը, որոնցից են բազրեփողկերը, սանհանգույցները և բռնակները
- Ամեն գիշեր, հավաքարարները մաքրում և ախտահանում են դպրոցը (գրասենյակներն ու դասասենյակները)
 - Կարող է լրացուցիչ աշխատակազմ և վերապատրաստում պահանջվի
 - Մաքրող և ախտահանող նյութերի կայուն պահեստ ունենալ և գնել սարքավորում արդյունավետության պահապանման համար
- Հատուկ ուսուցման առանձնահատկություններ
 - Մաքրել և ախտահանել աջակցող նյութերը յուրաքանչյուր դասից հետո, հաճախակի մաքրել կերպարանփոխվելու կայանները

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3 x Daily SMALL AREAS	2 x Daily SMALL AREAS	1 x Daily LARGE AREAS
<p>> Disinfect surfaces frequently touched such as light switches, door handles and bars, railings, elevator buttons, etc.</p> <p>> Areas to be cleaned in this category are Break Rooms, Restrooms, Nurses office and Front offices</p> <p>> Disinfect Cafeteria tabletops, drinking fountains, vending machines and other food dispensers</p> <p>> Disinfect all high touch areas in bathrooms including doors, partitions, toilet seats and flush handles, sink handles and paper towel dispensers</p>	<p>> Check and refill hand sanitizer stations, soap and paper towel dispensers</p> <p>> Disinfect kitchen surfaces such as refrigerator doors and handles, kitchen bathrooms and sinks, faucets</p> <p>> Clean all restrooms- clean toilets, urinals, sinks and floors then spray with disinfectant</p>	<p>> Classrooms- Clean tabletops and desks. Sanitize stationary countertops and desks</p> <p>> Clean and sanitize floors by vacuuming, mopping or both as needed</p> <p>> Vacuum Carpets, shampoo and sanitize if there are any visible stains present</p> <p>> Empty trash cans and recycle bins</p> <p>> Clean all restrooms- clean toilets, urinals, sinks then spray with disinfectant, final night cleaning if needed</p> <p>> Replenish all paper products in bathrooms, kitchens and offices including Nurses offices</p>
<p>DISINFECTING SMALL AREAS- To disinfect a surface you must use Morning Mist or other disinfectant to clean high touch areas such as door knobs, handles, railings and other surfaces or during your normal routine cleaning of the school site</p>		<p>DISINFECTING LARGE AREAS- To disinfect large areas and surfaces you must use the bigger machines and the Bleachpak disinfectant. The surface to disinfect must be clean before the disinfecting treatment.</p>
<p>WEEKLY PROCEDURES</p> <p>CLEAN AND DISINFECT CLASSROOMS, NURSES OFFICE AND OTHER HIGH TRAFFIC INTERIOR SPACES WITH FOGGER MACHINES AT END OF DAY OR NIGHTS ON FRIDAY AND MONDAYS</p>		

- Հավաքարարներն ամեն օր մաքրում և ախտահանում են հաճախակի օգտագործվող կետերը, դասասենյակները, գրասենյակները և զուգարանները օգտագործելով «Առավոտյան ցող» հաճախակի օգտագործվող կերտի համար և «Բայոեք» ավելի մեծ տարածքների համար, նաև պայուսակների համար, շաբաթը մեկ անգամ:

ԲԴՄՇ-Ի ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՔՐՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Նշված են այն կայքերի հղումները, որոնք տեղեկատվություն են պարունակում մաքրման նյութերի վերաբերյալ, որոնք մենք օգտագործելու ենք և ինչն ենք մենք օգտագործում այժմ՝ Առավոտյան ցողը (Morning Mist):

Քլորաքս (Clorox) ապրանքներ

<https://www.thecloroxcompany.com/release/clorox-professional-announces-clorox-total-360-system/6159da38-7fc0-44e1-8f4f-d40b4f84b4a3/>

Բայոէսք (Bioesque) ապրանքներ

<https://bioesquesolutions.com/botanical-disinfectant-solution/>

Ի՞նչ ենք այժմ օգտագործում մենք:

<https://diversey.com/en/product-catalogue/morning-mist-neutral-disinfectant-cleaner-5283046>

Առավոտյան ցող (Morning Mist® Neutral Disinfectant Cleaner | Diversey Global)

չեզոք ախտահանիչ նյութ

Ոչ ալկալային ախտահանիչ՝ գերազանց մաքրող հատկություններով: Կարող է օգտագործվել առողջապահության, հյուրանոցների, դպրոցների և ճաշարանների բնագավառներում: 10 րոպեանոց շփման ժամանակամիջոց:

Բակտերիա և վիրուսի սպանիչ: Ոչնչացնում է MRSA-ի և VRE-ի վիրուսը:

Համապատասխանում է արյունը և մաշկի հեղուկները մաքրելու արյունածին պաթոգենների չափանիշներին: Ունի կապտականաչավուն գույն և թարմ բույր: diversey.com



ԲԴՄՇ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՈՐՈՇ ՆՅՈՒԹԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

- ԲԴՄՇ-ն իր աշխատակազմին է հատկացնում անձնական պաշտպանության համար անհրաժեշտ բոլոր նյութերը, որոնցից են դիմակները, ձեռնոցները, երեսի վահանները և ձեռքերի տարբեր ախտահանիչներն ու անձեռոցիկները, մաքրող նյութեր և այլն: Նյութերը փոփոխվում են, եթե այլևս հնարավոր չէ գնել այդ նույն նյութը:



ՄՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ամեն օր սնունդ չի վաճառվի, իսկ բուժետը փակ կլինի:
- Ամեն ուրբաթ օր, առանց ավտոմեքենայից իջնելու, կկարողանաք դպրոցից 5 օրվա սնունդ վերցնել դասամիջոցի և ճաշի համար:
- Այդ սնունդը կարելի է բերել դպրոց և ուտել դասամիջոցի կամ ճաշի ընթացքում:
- Սննդի բաժանման ժամը և ճիշտ տեղը դեռ հայտնի չէ:
Աշխատանքները շարունակվում են:
- Սնունդը պետք է վերցնել երեխայի սովորած դպրոցից: (Բրբենք միջնակարգ դպրոցը պետք է սնունդ վերցնի Մյուլիբ դպրոցից:)

ՄՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

- Մննդի մատակարարման օրը երեխաներին հարկավոր չէ ներկա գտնվել:
- Ընտանիքները կարող են մեկ այլ անձի ուղարկել սնունդը վերցնելու համար, եթե իրենց չեն կարող վերցնել այդ ժամին:
- Բոլոր դպրոցներում աշակերտներին կտրվի 10 կամ 15 րոպեանոց դադար, որպեսզի կարողանան ուտել տնից բերված սնունդը:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Կորոնավիրուսի համապատասխանության թիմը կայցելի յուրաքանչյուր դպրոց ստուգում անցկացնելու նպատակով.

- Կորոնավիրուսի համապատասխանության դպրոցի թիմն օգնում է իրականացնել առողջության և անվտանգության արձանագրությունները
- Կորոնավիրուսի զսպման և պատասխանի շրջանային և դպրոցի ծրագրեր
- Կորոնավիրուսի վարակի կառավարման ծրագիր
- Դրական արդյունքների արձանագրություններ
- Աշակերտների և աշխատակազմի առողջական քննումներ (հեռավոր կարգով) նախքան դպրոց կամ շրջանային գրասենյակ ժամանելը
- Առանց հպման ջերմաչափով ջերմության չափում դպրոցի կամ շրջանային շենքերի մուտքերի մոտ
- Ելքի և մուտքի դները պետք է ցուցանակներ պարունակեն աշակերտներին, աշխատակազմին և համայնքին ախտանշանների, առողջապահական ստուգումների, երեսի դիմակների, ֆիզիկական հեռավորության պահպանման և վարկի նվազեցման մասին հիշեցնելու համար:
- Գնել և պահեստավորել ենք անհատական պաշտպանիչ սարքավորումներ (PPE) աշակերտների և աշխատակազմի համար
- Դպրոցի այցելություն Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահության գրասենյակի կողմից՝ դպրոցները բացելուց առաջ
- Դպրոցներում մուտքի և ելքի ուղիներ կնշանակվեն, որպեսզի սահմանափակեն այլ անձանց ամիջական շփումը
- Դպրոցները բացելու վերաբերյալ, առողջության և անվտանգության արձանագրությունների տեսանյութեր, հաղորդագրություններ, կայքեր և ռեսուրսներ են հատկացվել աշխատակազմի, աշակերտների, ծնողների և համայնքի համար

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

(ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

Կորոնավիրուսի համապատասխանության թիմը կայցելի յուրաքանչյուր դպրոց ստուգում անցկացնելու նպատակով.

- Հատկացվել է անվտանգության սարքավորումներ, որոնցից են ձեռքերը լվանալու և ախտահանելու կետեր, առանց հպման ջերմաչափերը, թափանցիկ միջնորմները և ձեռնոցները
- Յուրաքանչյուր հերթափոխ պետք է ելքի ու մուտքի նշանակված դուռ ունենա
- Յուրաքանչյուր դպրոց ունի ֆիզիկական հեռավորության պլան, տեսողական հիշեցումներ, առավելագույն տարողություն և միակողմանի երթևեկություն ֆիզիկական հեռավորություն պահելու համար
- Ծնողները/պահապանները/այցելուները չեն կարող դպրոց մտնել (միայն ժամադրությամբ)
- Առօրյա գործերն անել էլեկտրոնային նամակների կամ հեռախոսի միջոցով
- Հանդիպումներ հեռակա կարգով ժամադրության միջոցով
- Շշի մեջ ջուր լցնելու հարմար ծորակներ են տեղադրվել
- Սանհանգույցներում պետք է պարզ կերպ նշվեն հեռավորությունն ու տարողությունը
- Դասընթացներ. Կորոնավիրուսի վարակի նվազեցման դասընթացներ աշխատակազմի, աշակերտների և ծնողների համար, օրինակ՝ առցանց պարապմունք, աշխատակազմի պարապմունք առողջապահական անձնակազմի կողմից, ձեռնարկներ և տեղեկագրեր, որոնք հանրային առողջապահության ռեսուրսների և տեղեկատվության հղում, հիշեցումներ, հայտարարությունն, պլակատներ են պարունակում, ինչպես նաև պարապմունք աշակերտների համար
- Ձեռքերի ախտահանման կետեր և նյութեր
- Ձեռքերը լվանալու պրակտիկա և սովորություն

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

ԲՈՒԺԿԵՏԵՐ

➤ Առողջապահական բոլոր կետերը

- Սենյակները պետք է հսկվի առողջապահական գրասենյակի աշխատակցի կողմից
- Հետևել գավառի և դպրոցի բուժքրոջ խորհուրդներին, թե երբ աշակերտին բուժկետակամ տուն ուղարկել
- Հետևել մաքրման կանոններին
- Հետևել հանրային առողջության հրահանգներին աշակերտների և աշխատակիցների առողջությունը ստուգելու համար
- Հետևել Կորոնավիրուսի ազդեցության կառավարման ծրագրի արձանագրություններին

➤ Հիվանդության ախտանշաններ/հնարավոր է Կորոնավիրուս («հիվանդասենյակ»)

- Աշակերտների և աշխատակազմի մեկուսացման սենյակ յուրաքանչյուր դպրոցում, եթե Կորոնավիրուսի ախտանշաններ ցուցաբերեն դպրոցում
- Աշակերտը պետք է վերահսկված մեկուսարանում մնա, մինչև լիազորված անձը նրան տուն կտանի
- Քաջալերել ծնողներին/պահապանին երեխային ժամանակին տուն տանել

➤ Ոչ Կորոնավիրուս դեպքեր («բարեկեցիկ սենյակ»)

- Բարեկեցիկ սենյակ յուրաքանչյուր դպրոցում. Ոչ Կորոնավիրուսի հիվանդության հետ կապված հիվանդներ (վնասվածքներ, դեղորայքի ընդունում և այլն)

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

ՀԻՎԱՆԴ ԺԱՄԱՆԱԿ ՄՆԱԼ ՏԱՆԸ

- Ցանկացած աշակերտ կամ աշխատակից ՉԻ կարող դպրոց կամ աշխատանքի ներկայանալ, եթե ունի Կորոնավիրուսի ախտանշաններ (հանրային առողջապահության գրասենյակի հրաման)
- Ընտանիքը պետք է դիմի առողջապահական մարմիններին բուժում ստանալու համար
- Վարակված երեխան պետք է առնվազն 10 օր «մեկուսանա» տանը, երբ ախտանշաններ կունենա ԵՎ առնվազն 1 օր (24 ռամ) առանց դեղորայքի ջերմությունը իջնելուց հետո ԵՎ ախտանշանները (որոնցից են հազը և շնչահեղձությունը) բարելավվելուց հետո:
- Եթե երեխան ախտանշաններ չունի, բայց դրական արդյունք է ստացել Կորոնավիրուսի քննության ընթացքում, քննության օրից սկսած, նա առնվազն 10 օր պետք է մեկուսան:
- Եթե ախտանշանները ի հայտ գան մեկուսացման ընթացքում, երեխան պետք է առնվազն 10 օր մեկուսանա ախտանշանները սկսվելուց հետո: Երեխան պետք է ջերմություն չունենա, առանց դեղորայքի, 24 ժամ ԵՎ ոչ մի ախտանշան (որոնցից են հազը և շնչահեղձությունը) որպեսզի ետ գա դպրոց: Ցանկացած աշակերտ կամ աշխատակից, ով շփման մեջ է գտնվել Կորոնավիրուսով վարակված կամ վարակի կասկածի տակ գտնվող անձի հետ, շփման օրից սկսած, պետք է տանը մեկուսանա 14 օր տևողությամբ:
- Աշակերտը կամ աշխատակիցը կարող է դպրոց կամ աշխատավայր ներկայանալ տնային մեկուսացումը կամ տնային կարանտինը ավարտելուց հետո (խնդրում ենք օգտվել վերևում նշված #3 կետից)
- Ընտանիքները պետք է աշխատեն դպրոցի բուժքրոջ հետ մեկուսացման և տնային կարանտինի ժամանակացույցի հետ կապված հարցերը պարզելու համար:
- Աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման օրերին կկատարվի նաև առողջապահական վերապատրաստում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՁԵՌՔԵՐԻ ԼՎԱՑՈՒՄ, ԵՐԵՍԻ ԴԻՄԱԿ, ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Աշակերտների, աշխատակիցների և ընտանիքների շարունակական կրթություն.

Ձեռքերի լվացում

- Ճիշտ կերպ լվանալ ձեռքերը
- Հնարավորություն տալ հաճախակի լվանալ և ախտահանել ձեռքերը
- Հնարավորություն տալ լվացարանի մոտ գնալ
- Դպրոցում տեղադրել ախտահանիչ կետեր

Երեսը փակող հարմարանք

- Բոլոր աշակերտները (2 տարեկանից բարձր տարիքի) և աշխատակազմը պետք է երեսը փակելու հարմարանք հագնի և/կամ երեսի վահան դպրոցում եղած ժամանակ (բացառություն է տրվում բժշկի թույլատրությամբ)
- Ինչպե՞ս ճիշտ կերպ փակել երեսը:
- Քաջալերել աշակերտներին և աշխատակիցներին ձեռք չտալ երեսը կամ երեսի վահանը:
- Դպրոցները երեսը փակելու սարք կունենա, ովքեր առանց դրա կգան դպրոց կամ կկորցնեն այն:

Ֆիզիկական հեռավորության պահպանում

- Ֆիզիկական հեռավորության պահպանում, ինչպես դասասենյակում, այնպես էլ դրսում:
- Դպրոցի քարտեզ և ուսուցում, թե որտեղ քայլել (միջանցներում, աստիճանների վրա, դռների մոտ)
- Տեսողական նշաններ (նշաններ, կետեր, խաչեր գետնի վրա)
- Տարրական դպրոցներ. Նշված զոնաներ հեռավորություն պահելու համար



ԴԱՍՍԱՎԱՆԴՈՒՄ



ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մենք պարտավորության խնդրանք կուղարկենք ծնողներին՝ կրթական մոդել ընտրելու համար, որպեսզի մենք կարողանանք պլանավորել հիֆրիդ և/կամ հեռակա ուսուցման մոդել կախված առողջապահական պայմաններից:

Կախված պարտավորության խնդրանքի պատասխաններից և/կամ առողջապահական պայմաններից, միգուցե չկարողանանք անձամբ ետ վերադառնալ դպրոց:

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ- SB 98

180 կրթական թույլե անցումային մանկապարտեզի և մանկապարտեզի համար

230 կրթական թույլե 1-3-րդ դասարանների համար

240 կրթական թույլե 2-4-րդ դասարանների համար

180 կրթական թույլե շարունակական/համայնքային ցերեկային միջնակարգ դպրոցի աշակերտների համար

➤ **Կրթական թույլեները հինմված են և դպրոցում և տանը կատարված դասավանդման վրա:**

100% ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄՈԴԵԼ – ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ

- Հիմնվելով, թե քանի աշակերտ և ուսուցիչ կընտրեն հեռակա ուսուցման մոդելը, աշակերտներին կարող է նոր ուսուցիչ նշանակվել:
- Աշակերտներին շրջանի ուսուցիչ կնշանակվի (ջանք չի խնայվի աշակերտի բնակության դպրոցի ուսուցիչ նշանակելու համար) և կաշխատեն կրթական գրասենյակի կողմից հաստատված Go Math և Benchmark ծրագրերով: Նաև, ուսուցիչներին հասանելի կլինեն լրացուցիչ ծրագրեր:
- Աշակերտները կշփվեն ուսուցիչների հետ ամեն օր:
- Ուղիղ եթերով տրված դասերը կկտենտրոնանան ընթերցանության և մաթեմատիկայի վրա:
- Գնահատականները կնշանակվեն ըստ կրթական գրասենյակի կանոնների:
- Հիմնվելով, ուսուցիչների և աշակերտների ընտրած մոդելի վրա, դպրոցական շրջանը կորոշի, թե ինչպիսին է լինելու երկլեզու ուսուցումը:

100% ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ – ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ԱՆԿԱԽ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ (ILA)

- Աշակերտները կկարողանան ընտրել բոլոր դասընթացները 100% առցանց ուսուցմամբ:
- 7 – 12-րդ դասարանցիները կարող են արձանագրվել **անկախ ուսուցման ակադեմիայում (ILA)**, որը արտոնավորված և ընդունված է Կալիֆոռնիայի համալսարանի կողմից:
- Սա ծրագիրը **չէ** այն մարզիկների համար, ովքեր ցանկանում են NCAA-ի միջոցով սպորտով զբաղվել քոլեջում:
- Աշակերտները կկարողանան վերջացնել դասընթացը 22 օրվա ընթացքում, բայց կարող են նաև արագացնել ուսուցումը, ըստ իրենց կարողությունների:
- Ուսումնական ծրագիրը APEX-ն է:
- APEX ծրագիրն ունի առաջադեմ (Honors and AP courses) դասընթացներ:

100% ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ –ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ԱՆԿԱԽ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ (ILA) - ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

- Աշակերտները պետք է ծրագրում մնան ամբողջ կիսամյակի ընթացքում:
- Աշակերտներն ամեն օր կշփվեն ուսուցիչների հետ և շաբաթական մեկ անգամ գործակալի հետ:
- APEX ծրագիրը չունի ուղիղ եթերի դասեր:
- Ընտրովի դասընթացները սահմանափակ են:
- Աշակերտները կարող են երկակի արձանագրվել և ամենաշատն ունենալ 2 ընտրովի դասընթաց իրենց բնակության դպրոցում:
- 6-րդ դասարանի աշակերտները, ովքեր կրնտրեն 100% հեռակա ուսուցման մոդել կմնան իրենց դպրոցում, բայց կաշխատեն APEX ուսումնական ծրագրով:
- ILA-ն չի հաստատված 7-րդ դասարանից ցածր աշակերտներ ընդունելու համար:

ՀԻՔՐԻԴ ՄՈՂԵԼ (ԱՆՁԱՄԲ ԵՎ ԱՌՑԱՆՑ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Անվտանգություն

- Դասարանի աշակերտների կեսը, անվտանգությունն ապահովելու համար (կարող է միջտրամների պետություն լինի)
- Մուտքի բազմաթիվ դռներ և ջերմության չափում
- Մահմանափակ հավաքներ, ոչ մեծ միջոցառումներ հիմնված առողջապահական հրահանգների վրա
- Սպորտային միջոցառումները կկատարվեն հիմնված առողջապահական հրահանգների վրա
- Կտորե կամ մեկ անգամ օգտագործվող դիմակներ և սոցիալ / ֆիզիկական հեռավորություն է հարկավոր պահպանել
- Մաքրություն հերթավոխների միջև

Դասավանդում

- Աշակերտները կարող են ունենալ նոր ուսուցիչ
- Առավոտյան/կեսօրից հետո մոդել: Անձամբ և առցանց ուսուցման խառնուրդ, շաբաթը 4 օր: Նաև, շաբաթը մեկ լրիվ օրվա հեռակա ուսուցում:
- Խմբակային և ինքնուրույն միջոցառումների խառնուրդ

Տեխնոլոգիա

- Քրոմբուկներ են տրվել այն աշակերտներին, ովքեր դրա կարիքն ունեն
- Համացանցային կապ է տրվել բոլոր նրանց, ովքեր դրա կարիքն ունեն
- Տեխնոլոգիական աջակցություն ԲԴՄՇ-ի կայքի, դպրոցի կամ հեռախոսագանգի միջոցով

Տարրական դպրոցի հիբրիդ մոդելի դասացուցակի օրինակ

ԱՄ – Մ 140 րոպե + 40 րոպե առցանց ուսուցում = 180 րոպե

1-3 140 րոպե + 90 րոպե առցանց ուսուցում = 230 րոպե

4-5 140 րոպե + 100 րոպե առցանց ուսուցում = 240 րոպե

ԵՐԿՈՒՇԱԲԹԻՒՑ ՀԻՆԳՇԱԲԹԻ (Ա/Բ խմբեր)			ՈՒՐԲԱԹ
ԱՄ - Մ	1-2	3-5	100% Հեռակա ուսուցում
8:10- 9:20 անգլերեն Ա	8:10- 9:20 անգլերեն Ա	8:15- 9:25 անգլերեն Ա	
Դասամիջոց	Դասամիջոց	Դասամիջոց	
9:30-10:45 մաթեմատիկա Ա	9:35- 10:45 մաթեմատիկա Ա	9:40-10:50 մաթեմատիկա Ա	
Դասամիջոց	Դասամիջոց	Դասամիջոց	
12:10- 1:20 անգլերեն Բ	12:10- 1:20 անգլերեն Բ	12:15- 1:25 անգլերեն Բ	
Դասամիջոց	Դասամիջոց	Դասամիջոց	
1:35- 2:45 մաթեմատիկա Բ	1:35- 2:45 մաթեմատիկա Բ	1:40- 2:50 մաթեմատիկա Բ	

Միջանկյալ դպրոցի դասացուցակի օրինակ

Հիբրիդ մոդելի ուսուցում. Միջանկյալ դպրոց
 174 րոպե+ ամենափչը 66 րոպե առցանց ուսուցում
 Ընդհանուր = օրական 240 կրթական րոպե

Ա/Բ խմբեր	ԵՐԿՈՒՇԱԲԹԻ	ԵՐԵՔՇԱԲԹԻ	ՉՈՐԵՔՇԱԲԹԻ	ՀԻՆԳՇԱԲԹԻ	ՈՒՐԲԱԹ
7:00 - 7:55	ԴԱՍ 0Ա	ԴԱՍ 0Բ	ԴԱՍ 0Ա	ԴԱՍ 0Բ	100% Հեռակա ուսուցում
8:00 - 8:58	ԴԱՍ 1Ա	ԴԱՍ 4Ա	ԴԱՍ 1Ա	ԴԱՍ 4Ա	
9:03 - 10:01	ԴԱՍ 2Ա	ԴԱՍ 5Ա	ԴԱՍ 2Ա	ԴԱՍ 5Ա	
10:06 - 11:04	ԴԱՍ 3Ա	ԴԱՍ 6Ա	ԴԱՍ 3Ա	ԴԱՍ 6Ա	
11:04 - 11:56	ԴԱԴԱՐ	ԴԱԴԱՐ	ԴԱԴԱՐ	ԴԱԴԱՐ	
11:56 - 12:54	ԴԱՍ 4Բ	ԴԱՍ 1Բ	ԴԱՍ 4Բ	ԴԱՍ 1Բ	
12:59 - 1:57	ԴԱՍ 5Բ	ԴԱՍ 2Բ	ԴԱՍ 5Բ	ԴԱՍ 2Բ	
2:02 - 3:00	ԴԱՍ 6Բ	ԴԱՍ 3Բ	ԴԱՍ 6Բ	ԴԱՍ 3Բ	

10/19/2020

Միջանկյալ դպրոցի դասացուցակի օրինակ

Հիբրիդ մոդելի ու սուցում. Միջանկյալ դպրոց
 174 րոպե+ ամենաքիչը 66 րոպե առցանց ու սուցում
 Ընդհանուր = օրական 240 կրթական րոպե

(Ա/Բ խմբեր)	ԵՐԿՈՒՇԱԲԹԻ	ԵՐԵՔՇԱԲԹԻ	ՉՈՐԵՔՇԱԲԹԻ	ՀԻՆԳՇԱԲԹԻ	ՈՒՐԲԱԹ
7:00 - 7:55	ԴԱՍ 0Ա	ԴԱՍ 0Բ	ԴԱՍ 0Ա	ԴԱՍ 0Բ	100% Հեռակա ուսուցում
8:00 - 8:58	ԴԱՍ 1Ա	ԴԱՍ 4Ա	ԴԱՍ 1Ա	ԴԱՍ 4Ա	
9:03 - 10:01	ԴԱՍ 2Ա	ԴԱՍ 5Ա	ԴԱՍ 2Ա	ԴԱՍ 5Ա	
10:06 - 11:04	ԴԱՍ 3Ա	ԴԱՍ 6Ա	ԴԱՍ 3Ա	ԴԱՍ 6Ա	
11:04 - 11:56	ԴԱԴԱՐ	ԴԱԴԱՐ	ԴԱԴԱՐ	ԴԱԴԱՐ	
11:56 - 12:54	ԴԱՍ 4Բ	ԴԱՍ 1Բ	ԴԱՍ 4Բ	ԴԱՍ 1Բ	
12:59 - 1:57	ԴԱՍ 5Բ	ԴԱՍ 2Բ	ԴԱՍ 5Բ	ԴԱՍ 2Բ	
2:02 - 3:00	ԴԱՍ 6Բ	ԴԱՍ 3Բ	ԴԱՍ 6Բ	ԴԱՍ 3Բ	
3:05 - 4:00	ԴԱՍ 7Ա	ԴԱՍ 7Բ	ԴԱՍ 7Ա	ԴԱՍ 7Բ	

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անկարողունակ աշակերտներ (SWD)

- Պլանավորել ֆիզիկական հեռավորություն և պահպանել ու մեջ դժվարություն ունեցող և դիմակ կրել չկարողացող աշակերտների համար:
- Պաշտպանիչ սարքեր օգնականների և մյուս աշխատակիցների համար, որոնցից են թափանցիկ միջտրամները քննությունների համար
- Պլանավորել մաքրել/ախտահանել շարժական սարքերը
- Երեսի թափանցիկ վահաններ հատուկ աշխատակիցների /ծրագրերի համար:

Անզլերեն սովորողներ (EL)

- Գտնել կարիքները և առաջնահերթություն և տալ յուրաքանչյուր մոդելի առկայություն դեպքում:
- Բոլոր դասընթացները պետք է ընդգրկեն ELD ուսուցում
- Նախանշանակված ELD դասավանդում պետք է հատկացնել ամեն օր համապատասխան եցված ELD չափանիշների հետ և աշխատել փոքր խմբով
- Նախանշանակված ELD դաս հատկացնել հիբրիդ մոդելի առկայության դեպքում:

Խնամատար/անօթևան աշակերտներ

- Գտնել կարիքները և առաջնահերթություն և տալ յուրաքանչյուր մոդելի առկայություն դեպքում:
- Համոզվել, որ աշակերտներն ունեն անհրաժեշտ կրթական ռեսուրսներ (հետևել հանրային առողջապահության հրահանգներին):
- Ըստ կարիքի, կրթական նյութեր հատկացնել:
- Օգնություն ցուցադրել կրթական և սոցիալ հուզական կարիքները ապահովելու համար:



ՍՈՑԻԱԼ ՀՈՒՋԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ



ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Դպրոցում տեղի ունեցող խորհրդատվություն

- Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանը կշարունակի աշխատել Բրբենքի Ընտանեկան ծառայությունների գործակալության (FSA) հետ, որպեսզի խորհրդատվության ծառայություններ մատուցի տարրական ից մինչև միջնակարգ դպրոցի մեր աշակերտներին՝ ֆիզիկական հեռավորություն պահելու մեթոդով (մենք խրախուսում ենք անցկացնել համացանցային հանդիպումներ):
- Լրիվ հեռակա ուսուցման մոդելի ընթացքում, դպրոցում տեղի ունեցող խորհրդատվության ծառայությունները կշարունակվեն առանց ընդհատվելու, հեռախոսով և երբ հնարավոր լինի՝ գործակալությունում:
- Հիբրիդ մոդելի կիրառման ընթացքում, խորհրդատվական ծառայությունները տեղի կունան դպրոցում (մենք խրախուսում ենք անցկացնել համացանցային հանդիպումներ), գործակալությունում կամ հեռախոսով: FSA-ը կշարունակի ընտանիքների և դպրոցներին մատուցել անձնական/խմբակային ծառայությունների:

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանը ռեսուրսների պահեստ է տեղադրել շրջանի կայքում՝ «Կովիդ19 – թվային ռեսուրսների կենտրոն աշակերտների և ընտանիքների համար» (“Covid19 Student and Family Digital Resources Center”) վերնագրով <https://www.burbankusd.org/COVID-19> : Ռեսուրսների էջը թարմացվում է Լոս Անջելեսի գավառի կրթական գրասենյակի առաջարկների հիման վրա՝ ներկայիս համաճարակի պատճառով: Դպրոցական շրջանն առաջարկություններ է տեղադրել նաև խորհրդատվական աշխատակազմի կողմից:
- Յուրաքանչյուր դպրոցի կայք, հղում կպարունակի շրջանի ռեսուրսների էջի համար: Այս մեթոդով ռեսուրսները միշտ հասանելի կլինեն:

ՀԱՃԱԽԱԿԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

- ԲԴՄՇ-ի կայքի հաճախակի տրվող հարցերը բաժանված են հետևյալ բաժինների.
 - Ուսուցմանական ծրագիր և դասավանդում
 - Առողջություն և անվտանգություն
 - Հոգեկան առողջության և բարեկեցության աջակցություն
 - Սպորտ
 - Մանկի ծառայություններ
 - Տեխնոլոգիա
 - Երեխաների խնամք
 - Համայնքային/ընտանեկան ռեսուրսներ
- <https://www.burbankusd.org/reopeningfaqs>

ՀԱԶՈՐԴ ՔԱՅԼ

- Մենք պարտավորության խնդրանք կուղարկենք ծնողներին՝ կրթական մոդել ընտրելու համար, որպեսզի մենք կարողանանք պլանավորել հիբրիդ ն/կամ հեռակա ուսուցման մոդել կախված առողջապահական պայմաններից:
- Կախված պարտավորության խնդրանքի պատասխաններից ն/կամ առողջապահական պայմաններից, միգուցե չկարողանանք անձամբ ետ վերադառնալ դպրոց:
- ՆՇՈՒՄ. Կորոնավիրուսի փոփոխական լինելու պատճառով, մենք կշարունակենք հետևել իրավիճակին, մինչև վերջնական որոշում կայացնելը:
- Առաջարկություններն ուղարկել այս հասցեին.

re-opening@burbankusd.org